

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը: Նիստի ընթացքում տ. Արսեն եպս. Բերբերյանը հանգամանորեն զեկուցում է ՍՍՀՄ եկեղեցիների պատվիրակության ԱՄՆ այցելության, ապա Կրետեում ուղղափառ աստվածաբանների խորհրդակցական ժողովի մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդն իր գնահատանքն է արձանագրում տ. Արսեն եպիսկոպոսի՝ ՍՍՀՄ եկեղեցիների պատվիրակության կազմում ԱՄՆ այցելության և Կրետեի ժողովում նրա մասնակցության առթիվ:

Գերագույն հոգևոր խորհուրդն իր սույն նիստում ընդունում է տ. Վահան եպս. Տերյանի հրաժարականն Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդի իր պաշտոնից և նրան նշանակում ս. Գեղարդի վանքի վանահայր:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը զեկուցում է Մայր Աթոռի բյուջեի 1974 թվականի կատարողականի և 1975 թվականի նոր բյուջեի նախահաշիվների մասին: Գերագույն հոգևոր խորհուրդն իր գնահատանքն է արձանագրում Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գ. Քեհյայանի բարեխիղճ աշխատանքի մասին և հաստատում 1975 թվականի Մայր Աթոռի բյուջեի նախահաշիվը:

Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը սույն նիստում զեկուցում է 1974 թվականի՝ Մայր Աթոռում և նրա շրջափակից դուրս կատարված շինարարական աշխատանքների և 1975 թվականի շինարարական նոր աշխատանքների նախագծերի մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդն այս առթիվ ևս իր գնահատանքն է արձանագրում Ա. Գալիկյանի գլխավորությամբ կատարված շինարարական աշխատանքների մասին և հաստատում՝ 1975 թվականի շինարարական նախագծերը:

*
* *

Ապրիլի 6-ին, կիրակի.—Ը օր Զատկի. Կրկնազատիկ (Նոր կիրակէ).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ աբղ. Պետրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այսօր հրեշտակք ի բարձունս ուրախանան ընդ մարդկան, որք իջեալ ի յերկնից տան զաւետիս աշխարհի. ցնծացէք այսօր Քրիստոս

յարեաւ ի մեռելոց» (Շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 7-ին, երկուշաբթի.—Թ օր Յիսնանց. Աւետումն ս. Աստուածածնի.

Այսօր ս. Գայանե վանքում, օրվա տոնի առիթով, ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

*
* *

Ապրիլի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում են Մայր Աթոռի երիտասարդ միաբանների Մայր տաճարում խոսած քարոզները:

Քննարկմանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 13-ին, կիրակի.—Գ կիրակի Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին բովանդակալից քարոզ է խոսում տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 20-ին, կիրակի.—Դ կիրակի (Կարմիր կիրակէ).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ բացատրելով Կարմիր կիրակիի իմաստը, նշանակությունը և արժեքը եկեղեցու կյանքում:

*
* *

Ապրիլի 25-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը: